



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



(Ա. ՏԱՐԻ)

Ի ՅՈՒՆԻՍ 1900

(ԹԻԻ 6)



ԲՈՎ Ա. Ն Դ Ա. Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Արասահմանի հայ ուսանողութիւնը, Երուանդ Սրմաբէշխանկան. —
Վարդը (գարտնէլան յէլարտն), Գրիգոր Մոզեան, — Դիտական արձագանգ (օրը
— Բախար), Յ. Ս. Փափաղեան. — Պատրիարքը. — « Բազմապէպ », ին, Ե.
Սրմաբէշխանկան. — Ողջակէզը, Տիգրան Աճէմեան. — Կիսամանակ:



ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

ՇՇ ՇԱԻԻՂ ՇՇ

Կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին եւ 15ին

ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Պուլիտարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք:
Արատասահմանի > տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք:
Ամերիկայի > > 2 1/2 ամլար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր:

Երկու հասցէ միայնդտմայն ունենալէ առաջ եկած խառնուշիթութեան վերջ մը զնելու նպատակաւ սրտշունքաւ միայն թերթիս խմբագրութեան հասցէն ընդունիլ այսուհետեւ որուն պէտք է ուղղուին բաժնեդին, նամակ, յօդուած, լրագիր և դիրք:

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

(Bulgarie)

VARNA

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան:

Շահիղի մէջ յայտարարուելու համար խրկուած հրատարակութիւնները պէտք է երկու օրինակ ըլլան:

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԴԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի	1 ՅՈՒՆԻՍ 1900	Թիւ 6
---------	---------------	-------

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ

ՀԱՅ ՄԻՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԵՐ



Ճակատագրական յուետևու-
թեամբ մը, — որ կարծես մեր ցե-
ղին նկարագրին տիրական արտա-
յայտութիւնն է եղած յորմէ հետէ
գժբախտութիւնը հալածական կը
վարէ մեզ դարերու ցնորեցնող հե-
ռաւորութեանց վրայէն ինչպէս նա-
ւակ մը զոր ալիքի քմածին սու-
տումներ խութերու ցցուածնե-
րէն կանցունեն այնքան հիանալի
ճարպիկութեամբ մը, — շատ քիչ
անգամ մեր ազգային ամենէն
թաղծագին կաղութիւններուն մէջ
կերթանք փնտուել սփոփանքի իրա-
կան երեւոյթները որոնք չեն դադ-
րած երեւան գալէ, ճիշդ արեւի
ճառագայթով սակերանդուած ամ-
պի այն ճեղքուածներուն պէս որոնք
ժպիտի մը հանգոյն կը փթթին
երկիրքի ամպամած թխալոյսը ու-
թեան վրայ :

Մեր ազգին անցուցած այս ահեղ
փոթորկին մէջ, զոր ոսկէանոսներն
ալ չեն տեսած, և որուն տենդոս
գալարմանց մէջ ցեղի մը օրհասային
հառաչները կը մունչեն կարծես,
մտքերնիս ու սրտերնիս պահ մը,
լաւատես պաղարիւնութեան մը
վայրկենին, կրնանք յոյսի զովագին
հանգրուաներու մէջ հանգչեցնել :
Ու մենք, հայերս, մեր այս ամենէն
տագնապալի շրջաններուն, անե-
րեւակայելի կերպով պէտք ունինք
սփոփարար պարագաներու, յու-
սահատութեան ճգնաժամային որո-
շումները կասեցնելու և վայրկեան
մը առնելու համար շունչ մը, լայն,
կենսամտրոգ շունչ մը, որ տոկա-
ցումի, դիմագրութեան նոր կորու-
վով մը պիտի զրահաւորէ ամբողջ
ցեղը :

Հայաստան, արեան մեծաշառայ
հեղեղներէն յետոյ, կը շարունակէ
կաթիլ կաթիլ արիւնիլ, իր կեն-
սականութեան ճիշդ մէջտեղէն
զարնուած ըլլալով : Ա՛լ չիկան ե-
ղեւնական այն ամենի կազմակեր-
պութիւնները որոնք մէկ վայրկենի

մէջ սամբոսի զանգուածներ կը փճացնեն, թնդանօթ ու հրացան դադրած են խրամատելէ Հաստտանի հայութեան հոծ խրմբումները. բայց, ասոր փոխարէն, ոճրագործական նրբանքով մը, նշգրկի անժխոր ու թեթեւ հարուածը կայ՝ արուած երկրին բազկերակին, ուսկից արիւնը կը վազէ ոչ ակներեւ պոթկումով մը, կամաց կամաց, կայլակ առ կայլակ, առանց ցաւ ու տզազակ պատճառելու, բայց անդադրում հոսումով մը, որ միեւնոյն վախճանին կը յանգի — մահուան :

Մայր երկրին մէջ այսպէս. իսկ արտասահման, հայութիւնը այլապէս սպառիչ տազնապներով կը շարչադուի : Քանի մը մարդեր, յեղափոխութիւն ու կուսակցութիւն բառերուն ետեւը սպաստանած, ամէն բան իրար կը խառնեն, տակնուվրայ կ'ընեն. իսկ անոնց հետեւող մէկ քանի ցնորամիտներ կացութիւնը ա՛լ աւելի կը վատթարացնեն : Այս վիճակը այնքան յուսահատօրէն տեւական է որ քրօնիկ հիւանդութեան մը բոլոր անբուժելի ակտանիշերը ցոյց կուտայ :

Մեր ներքին ու արտաքին կացութեանց այս վհատեցնող հանգամանքին քով տարր մը կայ սակայն, երիտասարդ, կենսունակ, առոյգ տարր մը, ովասիսի մը յորդելակ կանանչութեամբը ու անոր սիփուարար զովութեամբն ալ. արտասահ-

մանի հոյ ուսանողութիւնն է անիկա : Մրրկաշոյղ ծովուն մթութեանը քով, անիկա հեզամբմունջ, արծաթաշող առուակին հանդարտ պայծառութիւնն ունի. անոր մտկրնաս մուռնալ բոլոր ցաւերդ, սրբտիդ յոյզերը, մտքիդ տազնապները բոլոր :

Ֆրանսաի, Գերմանիոյ և Զուլցերիոյ մասաւորական էն մեծ կեդրոններուն մէջ հոյ ուսանողները մեղուներու փութաջանութեամբ կաշխատին նոր բլիշներ շինել քանդուածներուն տեղ, ցեղը վերակենդանացնելու համար իր ուժասպառութենէն : Օտարին առջեւ, հայութիւնը պատուաւորապէս, փառաւորապէս ներկայացնող միակ տարրը՝ հոյ ուսանողութիւնն է, տաղանդաւոր, աշխատող, յարատեւող ուսանողութիւն մը, որ իրեն իտէալն ընտրած է շատ որոշ ու շատ գործնական կերպով, որ դիտութեան, գեղարուեստի, ազատական ասպարէզներու գրեթէ ամէն ճիւղերուն մէջ տեղ բռնած է մերթ այնքան նշանաւոր գործունէութիւն մը, մտքի այնքան ակներեւ բարձրութիւն մը ի հանդէս բերելով որ օտարներն իսկ սքանչացում կարտայայտեն ու իրենց գնահատումը ու խրախոյսը կընծայեն անասուած ազգի մը այդ պանծալի ներկայացուցիչներուն :

Յիսուն տարի է ի վեր հայութիւնը ուսանողներ կունենայ Եւրոպա :

Ամիրաներու փարթամ շրջանին, ուչիմ պատանիներ՝ նիւթական պաշտպանութիւններով՝ Ֆրանսա կերթային ուսանելու, մասնագէտներ դառնալու. սմանք կը յաջողէին, ուրիշներ կը ձախողէին:

Յետոյ՝ ունեցանք կենցաղասէր հարուստ ուսանողները որոնք հօրենական ոսկիի գէղեր բարձած՝ բան սորվելու պատրուակով կերթային լուսաւորութեան մեծ կեդրոնին մէջ ունեցածնին անասնօրէն միսերու ապուշ հաճոյքներու համար՝ անբանացնող հեշտախառութեամբ մը. ու կը վերադառնային առանց բան մը սորված ըլլալու, հիւժած, մաշած, ծերացած գրեթէ սրտով ու մտքով: Հիմա այս դժբախտ երեւոյթը անհունապէս բարեփոխուած է. այդ տեսակ անդիտակից ուսանողներ կա՛մ բնաւ չկան կամ շատ քիչ:

Եւրոպայի արդի հայ ուսանողութիւնը, առանց իր մանրամասնութեանը մէջ ինծի ծանօթ ըլլալու, տարակոյս չունիմ որ մեծագոյն մասամբ կը ներկայացնէ ողջամիտ, առողջ նկարագրի տէր, անյողզող, գիտակից երիտասարդներու խումբ մը, որ արդէն իսկ իր կարգերուն մէջէն ազգի մը բարոյական ու մշտաւորական տոհմային բարձրութիւնը յատկանշող գէւքեր արտադրած է: Մեր նոր սերունդին այն ներկայացուցիչները միայն, զորս ազգին պարգեւեց կեդրոնականը,

— այս հզօր դարբնոցը որ գերազանց հոգիներ ձուլեց կազմակերպեց և որուն՝ հակառակ իր կարճ տեւողութեանը՝ մեծ բան կը պատահի ազգը իր մտքի ու զգացման վերջին տասնամեայ գեղեցիկ վերափոթութեամբին մէջ — Եւրոպայի զանազան կողմերը, և մասնաւորապէս Բարիզ երեւան բերին Ալխատութեան, Յղացումի և Գործունէութեան այնպիսի յատկութիւններ որոնք մեր մասին եղած օտար տգէտ նախապաշարումներու համար ջախջախիչ անակնկալներ էին իսկապէս:

Եւ մինչ արտասահմանի հայութեան զանազան հատուածները կը հերձուին երկպառակութիւններու ծանրութեան տակ, և մամուլի մէկ քանի ներկայացուցիչները ամէն խնամք կը տանին վառ պահելու համար անհամերաշխութեան ոգին, մինչ անձնական փեթուտութեան անհեռատես այս դրութիւնը սնուցատու հաս կերպով իր ընթացքը կը շարունակէ ծայրայեղօրէն վրտանդելով մեծ օգուտը զոր հայութիւնը իրաւունք ունի սպասելու իր արտասահմանեան բաժինէն, ուսանողութիւնը իմաստուն հանդարտութեամբ, անմտր թափով մը հեռատես ու երկայնամիտ ինքնամփոփումի սփոփարար երեւոյթը կը բերէ իր շուրջը յուզող այս բոլոր պայքարներուն մէջտեղ: Եզածներուն վրայ ցաւելով հանգերձ, կը ջանայ առաջ եկած բարոյական

և նիւթական փնտր հակակշռել
խոհականութեամբ, աշխատութեամբ
և յարատեւութեամբ :

*
* *

Անհասկացողութեան ու անգի-
տակցութեան մութ ուղիին մէջ,
ուսկից բովանդակ հայութիւնը կ'ըն-
թանայ հիմակ, անհնարին է սրտի
յորդ փղձկումով մը չփարել մխի-
թարութեան այս կարգի ցանցաւ
և սակայն տեւական տեսարաննե-
րուն, անոնցմէ մեր արիւնտա սըր-
տերուն սպեղանի մը շինելու և
պայքարներու յոգնածութենէն
ջախջախուած մեր ջիղերուն կորով
պատրաստելու համար :

Եւրոպայի ուսանող հայ երիտա-
սարգութիւնը մեր նոր սերնդեան
ամենէն մաքուր, ջղուտ ու կենդա-
նարար մասն է, զարդարուած
մտքի ու սրտի ամենէն գեղեցիկ
ձիրքերովը, ու մտաւորական Եւրո-
պան անոր վրայէն միայն պիտի
կրնայ դուշակել ցեղերնուս բնա-
տոհմային նկարագիրը, որ մեծ
ազգերու նկարագիրն է :

Երուանդ Մումախեթիանիւան



ՎԱՍՏԱՐՈՒՄ

(ՊՍՏԱՆԵԱՆ ՅԵՇՍՏԱՆԻ ՄԸ)

Կարճուկ եւ թխորակ տղայ մըն
էր նորեկ ընկերս՝ Վահան. իր դէմքին
խոհուն արտայայտութեան վրայ
աչքերը կը վառվռէին անսովոր ցոլ-
մունքով: Լոսկեաց ու վայրենի, ան
երբեք չէր մտներ մեր ընկերական
չըջանակին մէջ, ուրկէ միշտ խոյս
կուտար. ասոր համար երբեք չըսիր-
ուեցաւ իր դասընկերներէն, որոնք
չատ հեղ կը ծաղրէին իր մենասիրու-
թիւնը: Իբրեւ պատասխան իրեն
նետուած հեզնութեանց՝ անիկա խը-
րոխտօրէն արհամարհոտ ժպիտ մը ու-
նէր, առանց զայրոյթի ամենաչնչին
արտայայտութեան մը:

Սակայն, իր այս տարօրինակ նկա-
րագիրն իսկ տեսակ մը ձգողութիւն
եղաւ որ այնչափ տղոց մէջ՝ զիս իրեն
մօտեցուց ու քիչ ատենէն այնքան
մտերմացանք որ սկսանք մեր սրտերն
իրարու բանալ: Մտերմի անկեղծ ու
անսեթեւեթ հաղորդականութեան մէջ
միայն տեսայ մեծ ու խանդավառ հո-
գի մը այդ անզգած ու անվրդով ար-
տաքինին ետեւ, ուր յեղափոխականի
արիւնը կը յորձանապտուտքէր հուժկու
թափով մը: Իր անփորձ ու միամիտ
պատանիի հոգիին մէջ՝ հայրենիքի
սէրը կանխած էր ուրիշ ամէն զգա-
ցում, վառած բորբոքած էր հոն՝ հա-
մասփիւս հրդեհի մը արշաւող բոցե-
րուն պէս: Տղայական բոլոր հաճոյք-
ներէն հեռու, իր սիրական մտածում-
ներուն մէջ թաղուած յարատւօրէն,
անիկա իրեն սովորական զբօսանք

ընտրած էր փոքր դաշոյն մը որով վտանգաւոր փորձեր կը կատարէր մեծ յաջողակութեամբ ու տեսակ մը վայրագ ճարպիկութիւնով:

Գարնան, երբոր մեր պարտէզին վարդերը կը բացուէին բուրումնաւէտ ու երանգաճոխ, ամէն առաւօտ անոնցմէ երկու փունջ դպրոց կը տանէի, մէկը դասատուիս ընծայելու, միւսը ընկերներուս մէջ բաժնելու, որոնք մեծ հրճուանքով կընդունէին զանոնք. մինակ Վահան կը մերժէր ու զգուանքի շարժումով մը խոյս կուտար անուշաբոյր ծաղկին մերձեցումէն. « վարդին հոտը ինձի համար շատ դառն է », կըսէր:

Վահանին այս տարօրինակութիւնը նոր առիթ մը եղաւ, որպէս զի իրեն զէմ ուղղուած ծաղրանքները աւելի չեշտուէին, եւ մանաւանդ իր մասին տածուած հակակրօթեան զգացումը աւելի սաստկանայ: Այն աստիճան որ Վահան՝ օր մը իր պաղարիւնութիւնը կորսնցնելով բարկութեամբ գոչեց. « Ուխտած եմ վարդ չհոտուրաւ, ցորչափ մեր քոյրերուն ու եղբայրներուն արեան հոտը շարունակէ բուրել »: Այս յայտնութիւնը ծիծաղ միայն առաջ բերաւ ընկերներուս մէջ, բայց ես, մտէն գիտակ իր մէջ փոթորկող զգացումներուն մոլեռանդութեանը, ոչ միայն տարօրինակ չգտայ իր այդ ուխտը, այլ եւ տեսակ մը յարգանք զգացի անոր նկատմամբ:

*
* *

Յետմիջօրէի մը, զբօսանքի ատեն, Վահան ու ես, ծառի մը շուքին սակ նստած կը խօսակցէինք. անիկա ինձի կը նկարագրէր, ձեռքի տենդոտ շարժումներով, սրտաբուխ ու վրէժ-

խընդիր հառաչներով, Հայաստանի աղէտալի վիճակը, անոր կրած տառապանքները քիւրտերուն ու կառավարութեան բիրտ պաշտօնեաներուն ձեռքէն:

Տաքը այնքան ճնշող էր ու մեր խօսակցութիւնը այնքան տխրեցնող որ Վահան՝ յուզումէն սպառած, չարչըրկող երազանքի մը թմրութեամբ համակ, գլուխը ծունդիս, սկսաւ մըրափել. ես ալ իր օրինակին հետեւեցայ, գլուխս քարի մը կը թնցնելով:

Ձեմ գիտեր որչափ ժամանակ այսպէս մնացինք, երբ յանկարծ Վահան վեր ցատքեց, դաշոյնը ձեռքը վրաս յարձակեցաւ՝ « դաւաճան » պոռալով. փիթերան եղած սպանուելու վտանգին առջեւ, պառկած տեղս մնացի, աչքերս գոց, ճիչ մը արձակելով:

Բարերախտաբար իսկոյն հասան ընկերներս, ու մեծ դժուարութեամբ զինաթափ ըրին Վահանը, որ աչքերը մոլեղնօրէն բացած, բերանը փըրփըրոտ, խուլ ձայնով կը պոռար. « քանի որ ուխտս լուծուեցաւ, հայրենիքս փրկուած ըլլալու է, եւ որովհետեւ փրկուած չէ, պէտք է որ մեռնիմ: » Մեր դասատուն որ վազած եկած էր, մէկդի առաւ Վահանը, զայն հանդարտեցնելու եւ համոզելու համար որ այդքան չնչին բանի մը համար չէր արժեք յուզուիլ:

Խեղճ պատանին, ա՛լ հիմակ հանդարտած, դառնապէս կուլար ու իր հեկեկանքներուն մէջէն կը լսուէին սա խօսքերը. « Ձեզի համար չնչին բան է, բայց իմ միսթարութիւնս այդ չնչին ուխտին մէջ էր միայն »:

Մեր մրափած ատենը, կատակասէր ընկեր մը կամբացուկ մը մօտենալով Վահանի, անոր սնդուքին քսած էր վարդ մը ու խոյս տուած էր: Ընկերս,

իր զգացած կատաղութեան շարժու-
մին մէջ, այդ կատակին հեղինակը
զիս կարծեր էր:

Յետոյ, երբ իր սխալը հասկցաւ,
Վահան զղջումի արցունքներով ճիտս
փաթտուեցաւ, որտազեղ համբոյրնե-
րով ծածկեց զիս բիւր ներողութիւն
խնդրելով:

Ամիսներ անցան այս զէպքին վրայ:
Ա՛լ մեր բարեկամութիւնը աւելի ամ-
բասնեցաւ: Օրին մէկը Վահան դըպ-
րոցը չերեւցաւ: Արձակուրդին ատենը
իր հայրը եկաւ, կորաքամակ եւ տը-
խուր, դասատուէն տեղեկութիւն ըս-
տանալու իր զավկին վրայ: Երբ ի-
մացաւ թէ այդ օրը դպրոց չէր եկած,
հէք ծերունին յորդ արցունք թափե-
լով կըսէր. « Ա՛խ, վերջապէս հասաւ
իր նպատակին, առանց մտածելու որ
հայր մայր ունի, որոնք չպիտի կըր-
նան դիմանալ իր կարօտին »:

Միայն ես գիտէի Վահանին դիտա-
ւորութիւնը, զոր առջի օրն իսկ
յայտնած էր ինծի. քանի մը ընկեր-
ներու հետ ասպատակութեան պիտի
ելլար Հայաստանի լեռները:

Իրիկուան, նոյնպէս հեծած, գաղտ-
նապէս ուղղուեցայ մօտաւոր լեռան
ստորոտը ուր Վահան ինծի պիտի ըս-
պատէր ինչ հրաժեշտ առնելու համար:
Հրացանի բոմբիւնով մը ընդունեց
զիս, ժպտը շրթունքին: Չճանչցայ,
ա՛յնքան փոխուած էր իր ասպատա-
կի հերոսական տարազին խիզախ
հագնուածքին մէջ: Աշխուժ թեթե-
ւութեամբ մը կը կրէր իր լանջքին
վրայ խաչաձեւ փամփշտանոցը, ու
ձեռքին մէջ փոքրիկ հրացան մը, ու-
րուն բունը կուշտին կըթնցուցած էր
անխեհեր հպարտութեամբ մը:

Պահ մը զերար գիտեցինք լուս ու
մունջ, սրտի խորունկ փղձկումով:

Վահանը այդ վայրկենին ինծի կե-
րեւնար գերբնական էակ մը, հոմերա-
կան դիւցազն մը որ պիտի երթար
խորտակել ազգի մը ստրկութեան
շղթաները, ու պիտի վերադառնար
հսկայի կռիւներուն մէջ ստացած դափ-
նիներովը վիրակապուած: Հրացա-
նի երկրորդ պայթիւն մը հիասթափ
ըրաւ մեզ, ու « Ժամանակ է բաժնուե-
լու » ըսաւ Վահան: Վար իջայ ձիէս,
գրկուեցանք ու պաղտուեցանք ան-
կուշտօրէն:

Ու հեռացման պահուս, մեր պար-
տէզէն փրցուած շքեղ վարդ մը տուի
Վահանին, որ տխուր ժպիտով մը ա-
ռաւ զայն, ջերմեռանդօրէն հոտու-
տաց ու լանջին վրայ զետեղեց:

— Օր մը այս վարդդ պիտի վերա-
դարձնեմ, ըսաւ աչքերը ուրախու-
թեան արցունքով թաց, բայց աւելի
հրապուրիչ պիտի ըլլայ եւ աւելի
բուրումնաւէտ....

ԳՐԻԳՈՐ ՄՈՋԵԱՆ
Ա. Ն. Հ. Կ. Բ. Բ. Ե.



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ՕՐԸ ԵՒ ՓՈՌՈՍԵԸ



Բժշկական աշխարհը՝ անհուն զու-
հողութիւններով և մեծամեծ ճի-
գերով կառուցած տունը քանդելու
վրայ է... մարդկութեան օգտին
համար:

Օր չըլլար որ մէկ մէկ նորու-
թիւններ մեզ չհաղորդուին, անշուշտ
հեգնելու համար այն ճշմարտու-

թիւնները որոնք բացարձակ համարուած և ժողովուրդին մտքին մէջ հաստատ հիմեր ձգած են երկար ժամանակներէ ի վեր :

Բոլոր այս ընդունուած, կրրկնուած և իւրացուած ճշմարտութիւններուն փշոռիլը սակայն մեզ պէտք չէ վհատեցնէ . ընդհակառակը շատ պատճառներ ունինք հաւատարու որ բժիշկները երբ նոր բան մը կրնեն հինք քանդելու համար՝ առանց փորձի, համազուտի և ապացոյցի չէ, մանաւանդ որ սկզբունքներն դիտութիւնը առաջացնել է, որմէ մարդկութիւնը անժխտելի կերպով կ'օգտուի :

Ուրեմն սպասենք և յուսանք :

Այս կարգէն է նաեւ այն լուրը որ կը հասնի Նաբոլիի մէջ վերջերս գումարուած բժշկական համաժողովէն, որուն նպատակն էր թոքախտի դէմ ձեռք առնուելիք միջոցներուն վրայ բանակցիլ :

Ֆրանսայի պատուիրակ բրօֆէսոր Լանըլօնկ ուսումնասիրութիւն մը ներկայացնելով համաժողովին՝ կը պատմէ թէ միեւնոյն պայմաններու մէջ ֆոլի մանրէն (թոքախտի միքրոպը) ներարկած ըլլալով 150 հաս հնդիկ խոզերու՝ անոնցմէ 50ը ծովազերեայ, 50ը լեռնոտ տեղեր և մնացեալ 50ն ալ իր աշխատանոցին նկուղներուն մէջ դնելով, սա արդիւնքը ունեցած է : Նկուղներուն մէջի կենդանիները աւելի երկար առեղի դիմացած են թոքախտի աւերումներուն քան ծու-

վեզերեայ և բացօթեայ տեղեր խորհուածները, ուրեմն ստորերկրեայ տեղերու օդը աւելի նպաստաւոր եղած է թոքերուն քան առատ և մաքուր օդը : Միայն թէ Լանըլօնկ այս փորձը մարդոց վրայ կատարած չըլլալուն, չէ համաբձակած յայտաբարելու որ մարդիկ ալ հնդիկ խոզերուն նման կազդուին միեւնոյն կերպով :

Սակայն Ամերիկայի Միացեալ-Նահանգներէն նմանօրինակ լուր մը լիովին կը հաստատէ ֆրանսայի բժշկին փորձերը և կապացուցանէ թէ մարդիկ ալ կրնան օգտուիլ այդ դրութենէն :

Սակէց քսան տարի առաջ ամերիկացի բժիշկ մը փորձով համոզուած է որ նկուղներու միօրինակ կլիման աւելի բարերար ազդեցութիւն մը ունի թոքախտաւորներու վրայ քան բացօթեայ տեղերու կլիման որ միշտ փոփոխական է, ուստի ֆէնթըբիլի մէջ, Լուիզիլի մօտերը կը գտնէ բնական քարայրներ զորս այսօր Ամերիկացիք կը ճանչնան Mammoth cave անունով և հոն խցիկներ շինել տալով պարզօրէն կը զարգարէ զանոնք և իր հիւանդներէն առաներկու հասը կը զետեղէ անոնց մէջ :

Թոքախտաւորները այդ ստորերկրեայ բնակարաններուն մէջ ինքզինքնին աւելի լաւ կզգան, հիւանդութեան ընթացքը կը կատի, կը բժշկուին և զուրս կելլեն ու

անկից վերջն ալ տարիներով կապ-
րին, միայն քանի մը հառը չի
դիմանալով օգի յանկարծական
փոփոխումին՝ կը սկարանան և կը
մեռնին :

Ասոնց յաջորդները միևնոյն ար-
դիւնքը կուտան, բայց կը նախըն-
տրեն իրենց կեանքին մինչև վեր-
ջը մութ բնակութեան մէջ մնալ
քան շուրս ելլելով վտանգուիլ և
հոն կանցընեն ամբողջ տարիներ, ու
վերջապէս կը մեռնին իրենց անզը
ձգելով ուրիշներու :

Ուրեմն Լանրջոնկի փորձերը
պարզ կրկնութիւնն էին ամերիկացի
բժիշկին փորձերուն, որոնք յաջողու-
թեամբ պսակուած են և դուցէ օր
մը յանձնարարելի ըլլան առ հասա-
րակ ամէն անգ :

Ըսել է այսուհետև մեր թորախ-
տաւորները տաքուկ կլիմայի տակ,
ծովեզերեայ անդեր կամ լեռներու
մէջ չպիտի խրկենք, այլ զանոնք աու-
ներու նկուզներուն մէջ պիտի պա-
հենք, որոնք հողին մակերեսութեն
մէկ քանի սուր վար են, ուր ըյսը
քիչ է կամ բնաւ չիկայ, կլիման
միօրինակ է և օգի հոսանքը գոյու-
թիւն չունի :

Միակ անտեղութիւնը որ կայ
խրոչեցնող և յուսահաւեցուցիչ,
այն է թէ հիւանդները գուցէ մեր-
ժեն ինքզինքնին ենթարկել այդ
ներքնահողեան կեանքին որ իրենց
պարզապէս ողջ ողջ թաղուած ըլ-
լալ զգացումը պիտի ներշնչէ, քա-

նի որ բաց օդը ելլելու յոյսը բուր-
րովին պէտք է մեռցնեն, և կլիմայի
ամենափոքրիկ փոփոխութիւն մը
վտանգաւոր պիտի ըլլայ :

*
* *

Աւերդգ չպիտի համարուի ան-
շուշտ հոս արձագանգը ըլլալ նաև
այն կարգ մը դիտուութիւններուն
և առաջարկներուն որոնք եղած են
այդ համաժողովին մէջ :

Տիրող կարծիքը սա ելած է որ
երկաթուղիներու կառքերը՝ որոնց
տախտակներուն, բարձրկներուն
կամ վարագոյրներուն կը քսենք
մեր երեսը մանաւանդ գիշեր ատեն
ճամբորդած ատեննիս, լաւագոյն
բոյներն են թորախտի միջրոպին .
ասի արդէն հաստատուած է Գեր-
մանիոյ մէջ կազմուած յասուկ
յանձնաժողովի մը կողմանէ ու իտա-
լիոյ մէջ ալ արդէն սկսած են դիւ-
րաւ հականերուելու յարմար կառ-
քեր յանձնարարել, ուստի կառու-
լարիւի որ բոլոր կառավարութիւն-
ները հսկեն ժողովուրդին յայտնի
վտանգ սպառնացող այս կէտին
վրայ և սերունդները փճանալէ ա-
զաանն :

Նաև օթեւանները ուր կը զի-
չերենք շատ անգամ և կը գործա-
ծենք ուրիշի մը անկողինը աւանց
յատկապէս մաքրել և սաւանները
փոխել տալու, միևնոյն վտանգը
կըսպառնան :

Ծխախտաի գործարանները, բան-
տերը, վարժարանները, վանքերը,

որբանոցները և առ հասարակ ամէն գործատեղիները ու նմանօրինակ հաստատութիւնները մէյ մէկ բոյներ են միշտ Քոստի միբրոպին համար որքան որ հականերեւու գրութիւնը ստէպ և պարտաւորիչ կերպով չգործադրուի ու մանաւանդ եթէ շարունակուի առանց բժշկական վկայագիր փնտուելու՝ պաշտօնեայ, աշակերտ, բնակիչ, անգամ և յաճախորդ ընդունիլ:

Կը յանձնարարուի մանաւանդ որ հիւանդոտներուն համար մեկուսի տեղեր յատկացուին, կզգիացած և միշտ հսկողութեան ներքեւ:

Երկաթուղիներու կառքերը շինուին ա՛յնպիսի պայմաններով որ անմիջական և կատարեալ հականերխումը դիւրին ըլլայ:

Պիտի գա՛յ արդեօք օր մը որ բորտոներու նման թոքախտաւորներն ալ բռնի հեռացուին ընկերութիւններէն և նետուին հեռակայ նկուղներու մէջ:

Տխուր է տեսնել այդ օրը, մանաւանդ որ թոքախտը բանաստեղծական հիւանդութիւն մը կը համարուի շատերէ և անկից վտրակուողները օր օրի աւելի սիրելի կը դառնան զիրենք չըջապատողներուն իրենց հալումաշ երեւոյթովը, դէմքի անբացատրելի մերմաղձուտութիւնովը և դառնուկի մը նման ամէն բանի համակերպող զգացումովը:

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Պ Ա Տ Ր Ի Ա Ր Ք Ը

Շաւիղի Բ. Թիւին մէջ, Օրմանեան պատրիարքի հրաժարականին աւթիւ, սա տողերը գրած էինք.

«Օրմանեան, աւելի քան ուրիշ ու է մէկը, գիտէ որ Սուլթանը՝ այս հրաժարականին աւթիւ ալ ընելիք արածուութիւնները ամենեւին չպիտի գործադրէ, ինչպէս եղած են նախորդ անգամներուն: Բայց գոնէ իրեն համար ստեղծուած պիտի ըլլայ յարմար պատրուակը դարձեալ իր աթոռը դառնալու...»:

Ու Պուրէն եկած լուրեր կը հաղորդեն թէ Հայր Մաղաքիա Օրմանեան՝ իր պատճառաբանեալ հրաժարականը պատուելով՝ գացեր նստեր է Յովակիմի աթոռին վրայ: Իրաւ, Սուլթանը ընդունել է մատուցուած առաջարկները, այսինքն՝ Սիսի կաթողիկոսական ըստ օրինի ընարութիւն, ոչ-կասկածելի հայերու ազատ երթեւեկ և զինուորական յետամնաց սուրբերու բաշխում. յաւիտենական յանկերգը իրատէնիւ, սրտնք երբեք չեն գործադրուած ու չպիտի գործագրուին երբեք, ցորչափ ելընդղի գայլը՝ հայերը սպաւսպուռ ջնջելու իր ծրագրէն նիւթականապէս ետ կեցնելու միջոցները ձեռք չառնէ Եւրոպա:

Սուլթանը՝ իր ծթած իրա-
 անները շնորհելով նորէն՝ պատ-
 րիարքը, և անոր հետ ամբողջ հայ
 ազգը խաբէլ կուղէ, միտքը դրած
 ըլլալով որ իր այդ թոյլտու-
 թիւնները մեռած տառ մնան
 միշտ. իսկ Օրմանեան՝ համոզուած
 թէ Սուլթանը զինք կը խաբէ,
 երևոյթներէն իրեն ընթացքին հա-
 մար արդարացում գտնելով, կեր-
 թայ նորէն կը բազմի Գում-Գարուի
 աթոռը, չարաչար խաբելով ամբողջ
 հայ ազգը. վասնզի կրնանք սպա-
 հով ըլլալ թէ այդ իրատէները
 որոնք՝ գործադրութեան պարագա-
 յին իսկ՝ ամենեւին առակ չեն թե-
 թեւցնելու հայ ազգին յոգնաթիւ-
 ցաւերը, բնաւ մարմին չպիտի դըտ-
 նան, ու պալտաի նախասենեակնե-
 րու ցուրտ լուծեան մէջ հծծուած
 բաւեր պիտի մնան ամէն տան :

Չինուորական սուրբերը ամէն
 ժամանակէ աւելի խստութեամբ
 պիտի պահանջուին սովամահ հա-
 յաստանցիէն, կիլիկիոյ կաթողիկո-
 սին ընտրութեան միջոցին Պահա
 պէյ դարձեալ իր բացարձակ էնթ-
 րիքները պիտի բանեցնէ՝ գործը
 ձախողութեան մասնելու համար,
 և հրեշտակի անմեղութիւնն ունե-
 ցող ու աշխարհքէն անտեղեակ հա-
 յուն երթեւեկն իսկ պիտի բախի
 ամենէն յուսահատեցուցիչ դժուա-
 րութիւններուն :

Օրմանեան, իր գարշելի արբան-

եակներն ու Արթին բաշան, —
 այս անձը որ այնքան ախուր դեր
 մը խաղալ կը թուի ազգին հան-
 դէպ, — Սուլթանին չափ պիտեն
 խաղցուած կատակերգութեան բո-
 լոր հրէշութիւնը, և սակայն իւրա-
 քանչիւրը իր անձնական հաշիւը
 ունի անվրդով կերպով իրեն բա-
 ժին ինկած դերը կատարելու այդ
 կատակերգութեան մէջ. Արթին
 բաշա՝ Սուլթանին և տէրութեան
 հաւատարիմ ծառայելու ախտով
 վարակուած է, Օրմանեան պատ-
 րիարք մնալու փառամուրթեան ու
 տպագան նիւթապէս ապահովելու
 տաղնապնելով կը տառապի, իսկ
 այս երկուքին հետ ճամբարակող
 սինլքոր միմաները՝ որոնք թրքա-
 հայուն էն դռնհիկ տարրին —
 վաշխառուի — պատկառելի ներկա-
 յացուցիչներն են, յարաբեցնելու
 պէս ազգին կուշտին փակած անոր
 արիւնը քամելու մըլեղութեամբ
 դազանացած են :

Արդ, ի՞նչպէս կարելի է քիչ մը
 բարեփոխում յուսալ այս նկարու-
 դիրն ու այս դիտաւորութիւնն ու-
 նեցող անձերու թշուառ բաղադրու-
 թենէ մը, որուն ձեռքին մէջ կը
 գտնուի, աներեւակայելի հակա-
 սութեամբ մը, ազգին ճակատագիրը :



ԲԱԶՄԱՎԵՊ, ԻՆ

Վենետիկի հանդիսարանին յունիսի թիւին մէջ հատուած մը կայ, ուր խօսուած է մեր «Արտասահմանի հայ մամուլը» խմբագրականին վրայ: Բազմաթիւ համակարծիք չէ մեր այն տեսութեան թէ արտասահմանեան մամուլը՝ իր ներկայ տարրերով՝ վեր է թըքահայ եւ գոսահայ մամուլէն: Կ'ըսէ թէ «ի բաց առեալ Մխիթարեան երկու հանդէսները, Բազմաթիւ եւ նորածին կրօնական հանդէսը, միւս ամէնն ալ մէկ նպատակի կը ծառայեն»: Քիչ մը վարը կաւելցնէ. «մինչեւ ցարդ արտասահմանի մէջ չերեցաւ Մշակի, Բազմաթիւ, Մխիթարեան եւ Նոր-Պարսի համայնագիտական օգտակարութեամբ մի ազգային լրագիր, որ կրնար ըլլալ, եւ աւելի կատարեալ»:

Ճշդիւ չենք գիտեր թէ Մխիթարեանները մամուլի բարոյական դերին վրայ ո՛ր աստիճան լայն գաղափարներ ունին. բայց վերոգրեալ երկու հատուածները՝ երկու մամուլներու հակակշիռն առթիւ մէջ բերուելով՝ նպաստաւոր տպաւորութիւն մը չեն թողուր մեր վայ:

Մենք ըսած չէինք թէ Պոլսոյ մէջ չորս մեծածաւալ օրաթերթեր չիկան, որոնք իրենց Բազմաթիւ ու պարունակութեամբը կը գլին կանցնին ամբողջ արտասահմանի մամուլը. բայց մեր պնդած կէտը սա է թէ՛ Թուրքիոյ եւ Ռուսիոյ մէջ տիրող զրաքննական պայմանները այնպէս մըն են որ՝ չէ չորս, քսան օրաթերթ ալ միեւնոյն արդիւնքին պիտի յանգէին, եթէ վերջնական կերպով ընդունինք թէ

մամուլին օգտակարութիւնը ոչ թէ իր քանակին, հապա իր վայելած ազատութեան, իր հեղեւած ուղղութեան եւ ձեռք բերած մտաւորական, բարոյական, ընկերային բարեշրջութեան մէջ կը կայանայ մանաւանդ: Պոլսոյ չորս օրաթերթերը ի՞նչ կընեն. մեր արդի վիճակին պահանջած ո՞ր ծառայութիւնը կը լրացնեն. Մխիթարեանները չեն տեսներ որ անոնք՝ ուղած չուղած՝ շտեմարաններ են քաղաքական եւ ներքին անպէտ լուրերու, ու այնպիսի յօդուածներու, որոնք երբեք չեն շօշափեր մեր ներքին ցաւերը, մեր իսկական վէրքերը, մեր հոգեկան, մտաւորական անհատնում պէտքերը: Արծրունիին Մշակ թող ինծի տան Մխիթարեան հայերը, ես իրենց հարիւր մեծածաւալ թերթ տամ, որոնք աւելի օգտակար եղած են նպարավաճառին քան հասարակութեան: Մշակ քսան տարի շաբաթը մէկ երկու անգամ հրատարակուելով փոքրածաւալ, անհուն ծառայութիւն մատուցած է մեր ազգին:

Բաց ի քանի մը հանդէսներէն, արտասահմանի թերթերը մէկ նպատակի կը ծառայեն եղեր: Չարմանալի ասացուած է: Երբ մէկ կողմէն Բազմաթիւ, Հանդէս-Արտարար (ասոնք ինչո՞ւ ի բաց առնուին), Համալսարան, Բազմաթիւ, Եկեղեցի կը լրացնեն մատենագրական, լեզուաբանական, ստուգաբանական, հնախօսական, գիտական ու կրօնական պէտքը, ի՞նչ կը մնար ընել Անահիտին, Նոր-Վեպտին, Պրօլօկին եւ միւս պարբերական թերթերուն. մեր գրականութեամբ, մեր ազգային կեանքով ըզբաղելը նուա՞զ կարելոր, նուա՞զ զժուարին գործ է: Եւ յետոյ, յանդիմանութեան թերթեւ երանդ մը չէ՞ք նշմարեր սա «միակ նպատակի մը կը

ծառայեն» խօսքին մէջ, երբ գիտենք թէ այդ նպատակը ուրիշ բան չէ եթէ ոչ ազգային փրկագործութիւնը, ազգային վերածնութիւնը որուն կը ձգտի արդէն հայութիւնը ամբողջ: Կարգ մը թերթերուն այդ միակ նըպատակին ծառայելը սխալ մըն է: Ասիկա՞ լսել կուզէ Բազմալեւ: Ուրեմն ինք համամիտ է պոլսահայ եւ ռուսահայ մամուլներուն այն ակամայ ուղղութեան որով անոնք չեն կրնար զբաղիլ մեր բուն ցաւերուն զարմանումին աւագ հարցովը: Այդ նպատակը, զոր ակնարկել կուզէ անշուշտ Վենետիկի հանդիսարանը, միակ նըպատակն է որուն հարկ է որ վազէ հայ մամուլը, հայ ժողովուրդը, վասն զի այդ նպատակին իրագործմանը մէջ կը կեդրոնանայ հայ ազգին նիւթական ու բարոյական երջանկութիւնը:

Բազմալեւ կը վերջացնէ ըսելով. « Առ Բաբելոն Հանդիս, Բեբելոն, Թարս, Լամա, Մարս, այս խոշոր հանդէսներուն գիմաց, տակաւին փառքով պատուով, զուգահաւասար հանդէս մը չծնաւ արտատահմանի նոր գաղութը »:


Իմ կարգիս ես ալ յոռետես կը գտնեմ Մխիթարեան պատ. հայրերուն այս գաղափարը. իրենց յիշած սա վերի հանդէսներուն գիմաց կը յամառիմ դնել, եւ շատ աւելի պատուով փառքով, իրենց երկու հանդէսները, Բանտերը, Հատարանը, Անհիտը, Նոր-Կեանքը, Եփեղեցին, որոնք՝ ազատ երկնքի տակ հրատարակուած ըլլալու իրենց առաւելակշիռ հանգամանքով միշտ աւելի համակրալից տեղ մը պիտի գրաւեն մեր սրտերուն մէջ:

Վերջապէս հետաքրքիր էի գիտնալ թէ « Մշակ (բայց հիմակուան Մշակին), Բազմալեւի, Արեւելի եւ Նոր-Դարի համայ-

նազխտակ օգտակարութիւնը » ո՞րն է: Եթէ, դարձեալ կը կրկնեմ, Մխիթարեան հայրերը, բոլորովին նիւթական մտածումով մը, մամուլին բախդատութեան մէջ նկատողութեան կառնեն թիւը ու քանակը, ցաւալի սխալ մը կընեն: Արտասահմանի մէջ անհնար է ունենալ ամենօրեայ թերթ մը Արեւելի ծաւալով, նախ անոր համար որ հոս հայութիւնը ցրուած տարադնուած է աշխարհի չորս կողմը, եւ յետոյ յիտուն վաթսուն հազար հայ՝ իր այդ ցրուածութեան մէջ՝ չի կրնար այդօրինակ թերթի մը ծախքը հայթայթել:

Կը սիրեմ յուսալ որ Բազմալեւի բազմահմուտ խմբագիրները գոնէ այս անգամ լաւ կ'ըմբռնեն ինչ որ ըսել կուզեմ:

Ե. ՄՐՄԱՔԷՇԻԱՆԼԵԱՆ



ՈՂԶԱԿԷԶԸ



Ասկէ 22 տարի առաջ երբ այժմեան Պուլկարիան կազմող գաւառները զազրեցան թրքական կայսրութեան մասը կազմելէ, մենք ալ՝ այդ գաւառներու մէջ բնակած հայերս՝ ստիպուած եղանք անջատուիլ թուրքիոյ հայոց հողերու իշխանութենէն. այդ էր պատճառը որ ինչպէս Պոլսոյ պատրիարքները նոյնպէս եւ Էջմիածնի կաթողիկոսները մեզի իրենց հողերու մխիթարութենէն բոլորովին չզրկելու համար սկսան պարբերաբար այցելու հովիւներ խրկել: Այդ կարգի հողերու հովիւներէն մէկն էր նաեւ հողերոյս Մկրտիչ վարդապետ Տէրունեանը, որ կարծեմ 1895 ղեկեմերբի վերջերն էր երբ հասաւ Շուսլա:

Ես եւ ընկերս Ք. Ինչքան ալ կանխակալ կարծիքներ ունէինք այդ կարգի հոգեւորականներու վրայ, բայց եւ այնպէս բուն փափաք մը զգացինք այցելութիւն մը տալ այդ հովիւին, մանաւանդ որ ամենուն ալ պաշտած Հայրիկին կողմէն խրկուած էր ան:

Ով որ առիթ ունեցած է տեսնել Շումլայի հայոց եկեղեցին, տեսած է նաեւ անոր բակին մէջ, փողոցի երկաթապատ մեծ դրան մօտ գանուող այն երկու փոքրիկ ցած եւ խոնաւ խուցերը, որոնք կը ծառայեն մէկը ժամկոչ աղբարին եւ միւսը ժամարար քահանային՝ իբր ննջարան. ճիշդ այս վերջինին մէջն էր որ գտանք Տէրունեան վարդապետը, որովհետեւ անիկա՝ իրբեւ սրբակոծն եկեղեցական՝ հակառակ թաղական խորհրդի բոլոր թախանձանքներուն՝ ուզած չէր ո եւ է ընտանիքի մէջ բնակիլ:

30-35 տարեկան, թխադէմ եւ բարձրահասակ, լայն եւ տփոյն ճակատով, սեւ մօրուքով եւ վառվառն աչքերով երիտասարդ եւ համակրելի վարդապետ մը սենեկին մէկ անիւնը նստած, իր նիհար եւ ջղուտ մասներուն մէջ երկար համբիչ մը կը պտըտցնէր անդադար:

Փայտեայ, խարխուլ, որդնակեր մահճակալ մը, թիթեղէ հին ծակծկած վառարան մը եւ թրքական նեղ եւ ցած բազմոց մը կը կազմէին սենեկին բոլոր կահկարասին: Հողէ յատակին վրայ փռուած էր մաշած եւ փոշոտ խաիր մը եւ անոր վրայ հնօրեայ գորգի մը պատուած մասերը: Սենեկին մէջտեղը դրուած էր ցած տախտակեայ աթոռակի մը վրայ պղնձէ աշտանակ մը, որու տարտամ, մարմրող ցոլքը հազիւ կրնար լուսաւորել իր շուրջը:

Տէրունեան, որու ներքին հոգեկան

յողուժը անկարելի էր չկարգալ իր տփոյն եւ նիհար դէմքին վրայ, արագօրէն սկսաւ պատմել իր ճամբորդութեան բոլոր մանրամասնութիւնները:

Իր այցելութիւնը սկսած էր Խու մանիայէն, բայց ռուսահայկան կառավարութիւնը ոչ միայն չէր ընդունած շինք, այլ եւ չէր ձգած որ անցնի Պուլկարիա եւ անմիջապէս գրեթէ բռնի նաւ գնելով արտաքսած էր ռուսական առաջին նաւահանգիստը, Ռէն: Սակայն բարեբաղդաբար նոյն օրերը Ռէնի առջեւ կը գտնուէր պուլկար շողենաւ մը որ զինուորական յանձնաժողով մը տարած էր հոն՝ պուլկար բանակին համար ձիեր գնելու. հոգելոյս վարդապետը՝ ճարահատ կը դիմէ այս զինուորականներուն որոնք շատ սիրալիր կերպով կընդունին զինքը եւ մեծ քաղաքավարութեամբ կը վարուին հետը մինչեւ Ռուսճուք:

Ռուսճուքի հայերը արժանաւոր ընդունելութիւն մը ըրած էին իրեն: Վարդապետը մեզ ցոյց տուաւ նաեւ թանկագին մատանի մը եւ համբիչ մը, զորս ռուսճուքցիք նուիրել էին կաթողիկոսական ներկայացուցչին:

Տէրունեան հետզհետէ կողեւորուէր իր պատմութեան միջոցին: Թիթեղեայ միժկակ տուփ մը բացաւ եւ մեզ միտմի կարգաց այն բոլոր պաշտօնական թուղթերը, որոնցմով բողոքած էր կաթողիկոսին, Պօլսոյ պատրիարքին եւ Ռուսմանիոյ արտաքին գործոց նախարարին, այդ կառավարութեան ոչ միայն անիրաւ այլ եւ ամարդի ընթացքին դէմ:

Մինչեւ կէս գիշեր մնացինք քովը եւ բաժնուեցանք մեր հետը տանելով ջերմ համակութիւն մը:

Անկէ ետքը ա՛լ մինչեւ իր այցել-

լուծեան վերջին օրը Շումլայի ամբողջ հայ երիտասարդութիւնը ամէն գիշեր Տէրունեանի քով կը համախմբուէր: Ի՛նչ հաճոյալի, ի՛նչ սիրուն գիշերներ էին անոնք եւ ի՛նչ սրտաբուխ, եռանդոտ խօսակցութիւններ: Սաանոյ ապստամբութեան եւ կոտորածին արիւնալի յիշատակները զեռ շատ թարմ էին այն ատեն: Քաջարի Ձէյթունէն ընկճուած թիւրք բանակը եւ ամօթահար բաշաները զէյթունցիներու յաղթական ոտքերուն տակ կը սողային զեռ:

*
* *

Անհուն սպիտակափայլ սաւան մը կը ծածկէր Քասբիչէնի լայնատարած դաշտերը եւ ձիւնի թանձր ու փափուկ խաւի մը ներքեւ թաղուած էր ամէն բան: Յունուար ամսոյ սառնաշունչ քամին կատաղի թափով մը անարգել կարչաւէր ամայի տարածութեան վերայ եւ իր վիխթարի ուժին առջեւ կը խոնարհէին ձիւնաթաղ արտերու մէջ հոս հոն տնկուած բարձրաբերձ, դարեւոր կաղնիներու կատարները:

Իր ընթացքին մէջ անգրգուելի էր միայն մեր շոգեկառքը, որ հսկայ օձի մը պէս կը սողար առաջ, ուղղագիծ ճամբուն վրայէն, իր ծխնելոյզէն պոթկալով մուխի թանձր ամպեր, որոնք վայրկենապէս կը հալէին, կաներեւութանային ցրտաշունչ օդին զայրացած հոսանքներուն մէջ:

Ձիւնի խոշոր հատիկներ միլիոնաւոր սպիտակ թիթեռնիկներու նման կը վազվզէին օդին մէջ եւ կրքեմն խմբովին կուզային զարնուիլ մեր վակոնի հաստ ապակիին. կարծես կուղէին խորտակել զայն եւ ներս խուժել՝ մասնակցելու համար մեր ու գեւորած երգերուն.

Քաղցր հայրենեաց ազատութեան եւ Քրիստոսի սուրբ հաւատոյն համար վեհափառ թէ ինձ մեռնիլ արժան չըլլայ:

Երկրորդ կարգի վակոնի մը մէկ բաժանումին մէջ տասնըմէկ հոգի խճողուած էինք:

Երբ Տէրունեան վարդապետը վերջացած համարեց իր պաշտօնը Շումլայի մէջ եւ որոշեց մեկնիլ Վառնա, մենք ալ փափաքեցանք ընկերակցիլ իրեն նախ մինչեւ Քասբիչէն եւ յետոյ մինչեւ Վառնա: Ուրա՛խ, հաճոյալի ճամբորդութիւն մըն էր ասիկա եւ, աւա՛ղ, ո՞վ կրնար մտքէն անցընել թէ այդ հազուագիւտ եկեղեցականը Վառնա կը տանէինք այրուելու համար: Ամենքս վարդապետին հետ միաբերան կերպէինք ամենէն եռանդնալից, ամենէն հայրենասիրական երգերը՝ երիտասարդական խանդով:

Ու շոգեկառքը, կարծես ան ալ ուղեւորուած մեր երգերէն, կը խոյանար առաջ խուլ կռանումով մը, իր ետեւը թափթփելով ու ձգելով մեր ըզզացումով եւ աւիւնով լեցուն երգերուն բեկորները.

Օ՛ն զրահաւորիմք, ո՛վ որդիք հայկեան,
Մեր սօր արցունքներ ջնջել յաւիտեան
.

*
* *

1896 թուականին փետր. 29 ին էր: Առտու մը ժամը զրեթէ 5 ին ատենները, զեռ արշալոյսի շողերը Սեւ ծովի հորիզոնը չլուսաւորած, տարբեր լոյս մը յանկարծ Վառնայի հայոց թաղի տուններուն կտուրները լուսաւորեց:

Առաւօտեան մեղմ մթութեան եւ հանդարտութեան մը մէջ յանկարծ լուցի եղան հայոց եկեղեցիի զանգակին երեք չորս հարուածները եւ գիշերապահի սուլիչին շչոցը արձագանգ

տուաւ շրջակայ նեղ փողոցներուն երկայնքովը :

Հայոց վարժարանը որ կը գտնուէր եկեղեցիին բակին մէջ, երեք յարկով բաւական խոշոր շէնք մըն էր եւ ա՛նոր ստորին յարկին մէջն էր նաեւ եկեղեցւոյ ժամկոչին ննջասենեակը :

Ժամկոչը տակաւին քնացած էր երբ իր գլխին վերեւ անորոշ խշրտոցներ լսելի եղան եւ վերջապէս աղմուկը շատնալով ժամկոցը արթնցաւ եւ կարծեւ թէ առաստաղին մէջ վազվառոզ մկներ էին, ինչ որ սովորական բան մըն էր այդ հին շէնքին ամէն կողմը, կռուփի մէկ երկու հարուած տուաւ քովի պատին :

Սակայն ձայները փոխանակ դադրելու շատցան : Խուլ զղրգիւններ, զերաններու եւ աախտակներու ձարձատիւներ սկսան լսուիլ եւ մարդը սարսափահար իր սենեկէն դուրս խոյացաւ :

Սոսկումով տեսաւ որ շէնքին ամբողջ տանիքը կարմրագոյն թանձր մուխի մը մէջ ընկղմած է եւ երկրորդ յարկին բոլոր պատուհանները պայծառապէս լուսաւորուած են :

Յիշեց յանկարծ թէ վերը, երկրորդ յարկին մէջ, Տէրունեան վարդապետը քնացած էր : Երկու քայլով սանդուխներէն վեր բարձրանալը եւ վարդապետին ննջարանին կից սրահը տանող առաջին դուռը բանալը մէկ եղաւ . սակայն ջերմ եւ թանձր ծուխ մը կտ հրեց զինքը եւ շունչը արգիլուելով ստիպուեցաւ դուրս նետուիլ :

Կրա՛կ կայ, աղաղակեց . քստմնելի աղաղակ որ քիչ յետոյ ամբողջ քաղաքը ոսքի հանեց :

Քանի մը ժամ վերջը շէնքը մոխիր դարձած էր : Մոխիր դարձած էր նաեւ կաթողիկոսական այցելու հովիւ Մըկըրտիչ վարդապետը, որուն ածխացած

մարմինն մասերը երկար փնտռուքներէ վերջը հազիւ կարելի եղաւ գրտնել ու հանել մոխրակոյտին մէջէն :

Քանի մը օր ետքը Վառնայի մէջ նմանը չտեսնուած շքեղ յուզարկաւորութեան հանգէս մը կը կատարուէր :

* * *

Այդ չարաչուք օրէն ի վեր հազիւ տարի մը անցեր էր երբ առիթ ունեցայ գալ Վառնա : Առաջին ցանկութիւնս էր տեսնել հոգեւոյս Տէրունեանի գերեզմանը եւ քայլերս ուղղեցի գէպի հայոց կեղեցին :

Այրած դպրոցին տեղէն քանի մը քայլ հեռու, ճիշդ եկեղեցիի պատին քով ցած, գրեթէ գետնին հաւասար փոքրիկ հողակոյտ մը տեսայ փայտէ սեւ խաչով մը, որուն վրայ սպիտակ գերերով գրուած էր . Մկրտիչ Վարդապետ Տէրունեան :

Ծնրադրեցի այդ աննշան հողակոյտին քով եւ ափ մը հող առնելով համբուրեցի . «հանգիստ, ըսի, քու մոխրացած մասունքիդ, սիրելի եւ անմոռանալի Տէրունեան, թող սիտի ունի քու այրած մրկած ոսկորներդ այն միակ մխիթարութիւնով որ դուն ալ քու ազգիդ խաղաղութիւնը լափող բոցերուն մէջ նահատակուեցար : Այն հրդեհը, որ քու սենեակդ պաշարեց, միեւնոյն հրդեհն էր որ ամբողջ Հայաստանի բարերեր դաշտերուն վրայ աւեր եւ մոխիր ցանեց :

« Այն բոցերէն, որ քու ազգիդ ցաւերովը տառապող զգայուն սիրտդ խորովեցին, կայծ մը պահուած է ամէն հայու սրտին մէջ եւ պիտի պահուի, մինչեւ որ օր մը այդ կայծերը մեծատարած հրդեհ մը դառնալով հալեցընեն ու փձացնեն Հայաստանի դարեւոր շղթաները . . . » :

ՏԻԳՐԱՆ ԱՃԵՄԵԱՆ



Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Կ

Պուսէն հետեւեալը կը գրեն մեզ մայիս 19 թուականով .

« Անցեալ հինգշաբթի պատրիարքը պալատ կանչուելով իրեն ըսուեցաւ թէ նախարարական յանձնաժողով մը կազմուած է պալատին մէջ, նկատողութեան առնուելու համար Սիսի կաթողիկոսական ընտրութեան գործը, երթեւեկի և տուրքերու խնդիրը . յետոյ ասոնց մասին հարկ եղած տեղեկագիրը կազմուելով կայսեր մատուցուելէ յետոյ, Քչ. կամ Գչ. արդիւնքը պիտի հաղորդուի պատրիարքարան :

Պատրիարքը երկու ամիսէ ի վեր տունը նստելէն ձանձրացած ըլլալով, իսկոյն յօժարեցաւ և ուրբաթ օր խառն ժողով հրաւիրելով կայսերական որոշումը հաղորդեց : Բոլոր անդամները, բացի երկու ատենապետներէն, ներկայ էին : Ինչպէս դժուար չէ գուշակելը, ժողովը համամիտ գտնուեցաւ պատրիարքին դարձին և հետեւեալ օրը գործին գլուխը անցաւ Օրմանեան : Երկուշաբթի և երեքշաբթի անցաւ . այսօր ուրբաթ, այդ խնդիրներուն մասին որ և է զեկուցում չիկայ . պատրիարքը մինչև չարեքշաբթի երեկոյ ոչ շատեն պատրիարքարան սպասեց որ թէ՛ զքերէ մը գայ, որպէս զի . յաջորդ օրը Աղգ. հիւանդանոց երթայ և հանդէսին նախագահէ : Բայց եկող գացող չը գըանուելով, պատրիարքին տեղ Գէորդ եպոսկոպոս գնաց փրկիչ :

Ռուսական նօթան մեծ մատտանջութիւն պատճառած է հոս, ինչպէս ճակ զինուորական կցորդներուն սաս անդ, մանաւանդ վերին սահ.

մանագրութիւնները երթալը : Նորէն ռուսական խաղ է արդեօք . տես ներք ինչ պիտի ըլլայ :

Պատրիարքը նորէն խաբուեցաւ . բայց կիլիկիոյ ժողովուրդը իր « սչ կարեմ » ով ըստ դաս մը տուաւ պատրիարքարանի : Սահակ եպիսկոպոս խապանեանի ընթացքը ամենուն կողմէ կը դովուի . սքանչելի տեղեկագիրները զրկած է հոս » :

— վերջին ժամանակներս հայկական խնդիրը վարարժարժում մը ստացած է ռուսական ազգու միջամտութեան մը չնորհիւ : Պուրոյ ռուս գետպանատունը մայիս 7 ին բերանացի գիտողութիւններ կընէ Դրան՝ Հայաստանի արեւելեան գաւառներու մէջ հայոց կացութեան վրայ . մէկ քանի օր ետքը ազգութանուցագիր մը կը ներկայացնէ Դրան : Միւս կողմէ ռուս կառավարութիւնը պաշտօնապէս կը յայտարարէ տւսարիական կառավարութեան թէ՛ եթէ Հայաստանի արդի կացութիւնը շարունակէ մընալ ներկայ անտանելի վիճակին մէջ, ինք (Ռուսիա) պիտի ստիպուի ազգու միջոցներու գիմել : Գերմանիոյ և Աւստրիոյ զինուորական կըցորդներ ճամբայ ելած են քննական պտոյտ մը կատարելու Հայաստանի գաւառները : Չենք գիտեր թէ բարենորոգումներու գործադրութեան համար Ռուսիոյ այս անակնկալ միջամտութիւնը ո՛ր ատրիճան անկեղծ ու վճռական է . սակայն ամէն պարագայի մէջ հայկական խնդրին նոր զարկ մը ստանալը օգտակարութեանէ զուրկ չի կրնար ըլլալ :

Отговорникъ Н. Драгулевъ
Переводъ « Орусияла » — Варна.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Հաստատւած 1898 Սեպտեմբեր 1 ին

ՎԱՌՆԱ

Կրթական նախարարութեան 11128 թիւ արտօնադրով

Կ'ընդունուին զիշքրօթիկ աշակերտներ՝ դոհայուցիչ պայմաններով :

Առողջ սնունդ , կատարեալ մաքրութիւն եւ ընտանեկան խնամք :

Ուսմանց եւ դիտութեանց ամէն ճիւղեր կ'աւանդուին :

Օտար լեզուներէն պարտաւորիչ են պուլկարերէնը եւ ֆռանսերէնը : Փափաքողները կրնան հետեւիլ նաեւ անգլիերէնի կամ գերմաներէնի դասընթացքին :

Զուլթակի եւ գաշնակի դասեր ալ կը տրուին մասնաւոր վճարումներով :

Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար՝ գիմեւ հիմն նադիր-սնօրէնին , հետեւեալ հասցէով՝

GRON MICAËLIAN

PENSIONNAT ARMÉNIEN

VARNA (Bulgarie)

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ Երաժշտական նօթերով հրատարակութեան առաջին պրակը ստացած ըլլալով ջերմապէս կը յանձնարարենք զայն մեր ընթերցողներուն :

Բաժնեդիւնն է վեց տետրը 32 ֆր. և հասցէն՝

DIRECTION DES CHANTS POPULAIRES ARMÉNIENS

5, Rue de Chateaudun, PARIS.

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Եւկրոդ րադ, Շիրշենսիա փողոց, (Սագաղը լեշնէի կից)

Կը ապագրուին հայերէն, պուրիարերէն, զողղիերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեառմս, հասցեառմս, հարսանեկան հրատիրագիր, ազդարարութիւն, նամակագրութիւն, պահտարան, մահազգ, վաճառականական ամէն տեսակ գործեր, զերք, քաղցիր, եւ այլն:

Գունաւոր և սևերգծ գարգազործերու համար ամէն լեզուէ ճոխ տաւեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵՍ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱԲՐՈՒԹԻՒՆ
ԳՐԱԵՐԸ ՅՈՅԺ ԳԻՐԴՄԱՏՅԵԱՍ

Ուրի՛ք ֆուլաններէ եկած յանձնարարութիւններ նշուրիտաբ և փութով կը հասարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).

